

Οι Έλληνας της Ρωσίας και της Σοβιετικής Ένωσης. Μετοικεσίες και εκτοπισμοί, οργάνωση και ιδεολογία. Έπιμέλεια Ι. Κ. Χασιωτή, Θεσσαλονίκη 1997-685 σελ. (Ռուսաստանի և Խորհրդային Միության հայերը: Վերաբնակեցումներ և տեղահանություններ, կազմակերպություն և գաղափարախոսություն: Խմբագրությամբ Ի. Կ. ԽԱՍԻՈՏԻՍԻ, Սալոնիկ, 1997, 685 էջ):

Աշխարհում մոնոէթնիկ պետություններ դուրսից չունեն։ Յուրաքանչյուրում, տեղաբնիկ ազգի ներկայացուցիչների հետ, ապրում են մեկուսացված, մյուսում պակաս թվով այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնք հայտնվել էլ այնտեղ տարրեր ժամանակներում և տարրեր պատճառներով։ Այդպիսի բազմազգ պետություններից են անցյալում Մոսկվայի մեծ իշխանությունը, ապա՝ Ռուսական կայսրությունը, ԽՍՀՄ-ը, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանի Ռազմա-Նախարարությունը, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո կազմավորված ԱՊՀ երկրները։ Այդպիսի ազգերի ներկայացուցիչներից մեկին՝ հույներին է նվիրված սովորածավալ կապիտալ մի աշխատություն՝ ստեղծված մի խումբ հույն պատմաբանների կողմից, անվանի պրոֆեսոր Ի. Խասիոտիսի ընդհանուր խմբագրությամբ։

Աշխատության ստեղծմանը մասնակցել են

1 Սալոնիկի համալսարանի պրոֆեսոր Ի. Խասիոտիսը հայտնի է իր բազմաթիվ լուրջ և խորաթափանց մենագրություններով ու դիտարկումներով հոդվածներով, որոնցից մի քանիսը նվիրված են հայ և հույն ժողովուրդների համակեցությանն ու համագործակցությանը, Հայկական հարցին, հայոց ցեղասպանությանը, Հունաստանի հույնական գաղութի պատմությանը և այլն։ Նա հայտնի է նաև իր հասարակական-քաղաքական, այդ թվում՝ հայանպաստ, գործունեությամբ։ Այդ բնույթի աշխատություններից նշենք՝ I. K. Hassiolis. «The Greeks and the Armenian Masacres (1890—1896)», Neo-Hellenica, 4 (Austin, Texas, 1981), p. 69—109; Idem: «Shared Illusions: Greek-Armenian Cooperation in Asia Minor and the Caucasus (1917—1922)». In:—Greece and Great Britain during World War I, Սալոնիկ, 1985, էջ 139—192. Idem. The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915—23). In:—The Armenian Genocide: History, Politics, Ethics. Խմբագրիչ՝ Ի. Հովհաննիսյան, New York 1992, p. 129—151; Հունարեն լեզվով՝

Վլասիս Աղձիգիսը, Արտ. Քսանթոպուլու-Կիրիակուն և Ի. Խասիոտիսը։ Առաջին երկուսը հավաքել են աղբյուրագիտական նյութեր՝ գրավոր և բանավոր, ինչպես Հունաստանում, այնպես էլ հետազոտության առարկա երկրում, Աղձիգիսը՝ Աբխազիայում, Հարավային Իուսաստանում և Միջին Ասիայում։ Քսանթոպուլու-Կիրիակունը ուղարկությունը բեռնել է Օդեսայի, Մարիուպոլի և հատկապես Թրիլիսիի, Վրաստանի ներքին շրջանների և Աջարիայի վրա։ Նա ԱՄՆ-ում գր. դեպի Անդրկովկաս տեղի ունեցած հույների գաղթի մասին տեղեկությունները քաղել է Հունաստանի Արտաքին գործոց նախարարության պատմական արխիվից, Լոնդոնի Public Record Office-ից (Foreign Office) և Փարիզի Archives du Ministère des Affaires Etrangères-ից։

Ի. Խասիոտիսը կազմել է ամբողջ գործի ծրագիրը, խմբագրել այն, հավաքել և հետազոտել է գլխավորապես ամերիկյան պրադարանների տպագիր նյութերը։ Աշխատանքի վերջում գործին մասնակցություն է ունեցել Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի գիտաշխատող Նարգարիտա Անատոլևնա Արաջիոնին։ Նա ներկայացրել է Ղրիմի և Մերձագոլյան շրջանի հունական բնակչության ժողովրդագրության մասին տվյալները։ Օգտագործվել են նաև Կրասնոդարի ՊԱԿ-ի արխիվը, ՌԿ(Բ)Կ, Սովետական Միության Կոմ. կուսակցության արխիվները։ Բազմաթիվ տեղեկություններ են հավաքված

«Οι Άρμενιοί της Ελλάδας: Ιστορία, οργάνωση, ιδεολογία, κοινωνική ενσωμάτωση» "Ιστορ, αρθ. 8 (Δεκεμβριος 1995) σελ. 85—115 (Հունաստանի հայերը։ Պատմություն, կազմակերպություն, գաղափարախոսություն, սոցիալական ներմամնավորում, «Հիստոր» հանդես № 8 (1995 թ. դեկտեմբեր), էջ 85—115, Ի. Խասիոտիսը հեղինակն է «Армянский вопрос» հանրագիտարանում՝ «Греция и Армянский вопрос» հոդվածի (Երևան, 1991, էջ 152—153)։

«Հետազոտական ծրագրի բանաձևը պատմա-
թյան արխիվից» (գեպերին ժամանակակից
ների և ականատեսների հուշեր), առանձին առ-
հատների սեփական արխիվներից և այլն: Լայ-
նորեն օգտագործված է սպագիր գրահանույթու-
նը՝ գրքեր և հողվածներ, այդ թվում Հայաս-
տանի հույների վերաբերող: Հայ մասնագետ-
ները օտար լեզվով գրված գործերից հեղինակ-

2 Հայ հետազոտողին տեղյակ ենք պահել
Հայաստանի հույներին վերաբերող հունարեն
լեզվով լույս տեսած աշխատություններին:

Թագ. Ἀγαθόν κείδε. Τραγικά γεγονότα στις ε-
παρχίες Γκιόλια και Ἀρταχάν του Κάρς Κα-
κασού, Ποντιακή Ἔρετα 74 **Թ Ե Ռ Ֆ.** Ա գ ա թ ո -
ն ի ի ղ ի ու. Ողբերգական իրադարձություններ,
Կովկասի Կարսի Գյուլու և Արղահան նահան-
գներում (sic), «Պոնտական օտախ պարբեր-
ական, № 74 (հուլիս-օգոստոս-սեպտեմբեր 1983)
էջ 132—137, նույնի՝ Օ ԹՕՐԿԻՆՆԵՍ ՏՐԱԿԻՆ
ՎՍՏԱՆՈՒՄԻ ԱՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՈՒԼԻԱ (Թուրքական բա-
նակը քաղվում է Գյուլայից, նույն տեղում)
№ 73 (ապրիլ-մայիս—հունիս, 1988), էջ 132:
Դե օր շուր Դր Կ յ օ ռ ի օ ձ ի ծ ի ծ. Օ Ս ՈՒՆՈՒՍ
ԿԱՐՍԻ (Գեորգիոս Գրիգորիազիս, 1973), Լ ա Վ Ն Ն Ն
Καλφούγλου. Օ: Ἑλληνας εν Καυκασο
Ի ս ա ն Ն ի ու Կ ա Վ Ֆ թ ղ ի ու. Կովկասի հույ-
ները. Աթենք, 1908): Լ ա Վ Ն Ն Ն Գ. Կ ա Յ Տ -
ար ի ծ ի ծ, -II, «Ἐξόδο» των Ἑλλήνων του Κάρς
τῆς Ἀρμενίας (1910—1921) (Ի ս ա ն Ն ի ու
Գ. Կ ա ղ տ ա Ր ի ղ ի ու. Հայաստանի Կարսի
հույների ժամերը, 1910—1921. Սալոնիկ, 1908
Տյուլիանոս Մալոյանոս. Το Κυβερνείον Καρς του
Ἀντικαυκασού (Καρσέσκαια ὀβλαστή) και τὸ ἐν
αὐτῷ ἑλλητικὸν στοιχεῖον κατά τὴν περίοδον
1878—1920 (Ս տ ի ի ի ա ն ու Մ ա Վ Ր Ո Ղ Լ -
ն ի ու. Անդրկովկասի Կարսի նահանգը և նրա
հունական տարրը 1878—1920 թթ. Սալոնիկ
1963, X. A. Μουρατζαγιδիս. Οι ἐν Καρς
Ἑλληνας (Ն. Ա. Մ ու Ր ա տ ի ա ն ի ղ ի ու .
Կարսի հույները, «Ἐξοστάν» հանդես № 5
(1907—1908), էջ 360—365, Κ ω ν σ τ. Κ.
Παπουλιδիս. Օ Ἑλ. Βενιῆλος και ο Ἑλι-
λθισμός του Καυκασού το 1914, Βαλκανικά Σου-
μειχτα 3 (1989), 4 ո ն ս տ. Կ. Պ ա Վ Ն Ե ի
դ ի ու. Է ի Վ ն ի ղ ի ու ը և Կ ո Վ կ ա թ ի հ ու յ ն ե ռ ը
1914 թ., էջ 131—171: X Ր. Σ α μ σ ο υ γ λ ῖ -
δիս. Το Χρονικό του Καρς (Ն Ր. Մ ա մ ու լ ի
ի ղ ի ու. Կարսի ժամանակագրությունը. Ա-
թենք, 1987): Χριστοφοφορος Τσερτσι.
Στις επαλσεις του Καρς (Ն Ր ի ո տ Ո Ֆ թ Ր ո ո -
Յ ե Ր ա ի Կ. Կարսի զիրքերում. Լ ս Ր ի ս ա, 1983),

ներին ծանոթ են Ռ. Գ. Սյունու, Ս. Աֆանաս-
յանի, Ա. Հ. Աբախյանի, Գ. Բուրնույանի,
Ռ. Սովհաննիսյանի, Ա. Ս. Խախանովի, Գ. Կոր-
զանովի, Ս. Կ. Մաթոսյանի, Կ. Մուրադյանի,
Վ. Օշականի, Ա. Ար. Ուլունյանի, Ա. Օ. Սա-
բաջյանի, Ծ. Ղ. Սարգսյանի և Ռ. Գ. Սահակյա-
նի, Մ. Վարանդյանի և այլոց աշխատություն-
ները: Ամբողջության մեջ օգտագործված գրա-
կանությունը 500 միավորից ավելի է:

Նմազիրը նշում է տեխնիկական այն զբ-
վարությունները, որոնք թույլ չեն տվել օգտվե-
լու գլխավորապես եսիկին խորհրդային Միու-
թյան արխիվներից:

Ազգային փորձամասնություններ կան լ
Հայաստանում: Թեև բնիկ ազգի մեջ նրանք
չունեն տոկոս ևն կազմում. բայց նրանց պատ-
սությունը մեր պատմության մի հրվազն է:
Այդ ազգերից մեկը Հայաստանի հույներն են:
Հետաքրքիր է իմանալ, ե՞րբ են հաստատվել
Հայաստանում, որտեղից և ինչու են զարթել
մեր երկիրը, ինչով են զբաղվել: Ծիծ միևնչ
Հայաստանի խորհրդայնացումը նրանց մասին
քիչ քո շատ գրվել է. ապա խորհրդային ժա-
մանակաշրջանում Հայաստանում ոչինչ չի գր-
վել կա՞մ որովհետև որանով զբաղվող (կարև
առաջ ազգությունը հույն) չի եղել, կա՞մ էլ,
հատկապես 30-ական թթ. երկրորդ կեսից, ստա-
լինյան բռնությունների ժամանակ, մյուս սփոթը
ազգությունների» շարքում հույները նույնպես
հայածված տարր էին: Ինչ որ գրվել է՝ հրա-
տարակվել է արտասահմանում, ինչ հայտնի է
միայն մեկ աշխատություն՝ Էլեֆթերի Խարա-
ցիդիսի ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտում 1990 թ. պաշտպանված դիսեր-
տացիան Χαραυιδνε Ἐτεφτερηφ.
Χοζυησθεννηύ βυτ η ματηρναλην κυλ-
τηρα γρησσεκογ ηασελην Βοστωνην
Αρμενην βο βτωρη ηολωνην ΧΙΧ—παχα-
λε ΧΧ βεκα, Αβτωρεφ. δνε. κανδ. ηστ. η.
Ερεβαν, 1990 (հեղինակը արտագաղթել է
Հունաստան):

Սույն շարագրանքը զուտ գրախոսական չե-
այն հետապնդում է մի նպատակ՝ բնթերցողնե-
րին ներկայացնել, որքան դա հնարավոր է, վե-
րոհիշյալ ծավալուն գրքի համառոտ բովանդա-
կությունը, այն էլ ոչ ամբողջությամբ: Ինքնը-
սինքյան հասկանալի է, որ ծանրանալու ենք
հատկապես այն հատվածների վրա, որոնք վե-
րաբերում են հիմնականում Հայաստանի հույ-
ներին:

Գրքի «Առաջին մասը» բաղկացած է ութ
գլխից (էջ 43—221) և վերաբերում է «Հույնե-
րի գաղթներին ուսական տարածքներ ՄՅ՝ դա-
րից մինչև 1917 թ.ա: Այստեղ խոսվում է Մոսկ-

վայի մեծ իշխանությունում և Ղրիմում առաջացած հունական հնագույն գաղթավայրերի մասին: Հեղինակների կարծիքով, հույները գաղթելու են դրզել օսմանյան աթրապետություն հաստատումը համական Արևելքում, Հաի—Սոֆիա Պալեստինայի ամուսնությունը Իվան 111-ի հետ 1472 թ., ապա՝ ռուսական Պատրիարքության հռչակումը 1589 թ.:

Առավել հանգամանորեն խոսվում է Ղրիմի հունական գաղութի մասին (հատկապես XV—XVII դդ.), Հեղինակների ձեռքում եղած ժողովրդագրական տվյալների հիման վրա ցույց է տրվում, որ Կաֆայում 1481 թ. ապրում էին 8—7000 քրիստոնյաներ: XVI դարի սկզբում նրանք 5412 ընտանիք էին հաշվվում: Ոսմանյան իշխանությունների կողմից 1529 և 1545 թթ. անցկացված մարզահամարներից առաջինի տրվյալներով Կարավային Ղրիմում ապրում էր 35986 մարդ, որից հույներ՝ 19088, հայեր՝ 7832, սահմանականներ՝ 7373, իրաններ՝ 1271:

Հույների արտագաղթը Ղրիմից Մերձարևելյան շրջան տեղի ունեցավ 1778 թ.: Նրանք հաստատվեցին Եկատերինոսլավում և Սարյուպոլսում: Գաղթեցված քրիստոնյաների թիվը հաշվվում էր 31000 հոգի, որոնցից 12000-ը հայեր էին:

Հույների թիվը աճեց XVIII դարում, հատկապես Պետրոս I-ի և Եկատերինա II-ի վարած քաղաքականության շնորհիվ:

Մեծ համար նետաքրքրություն է ներկայացնում Ղևոնգին մասին 3-րդ գլուխը՝ Հույների առաջին վերաբնակեցումները Անդրկովկասում: Եթե Հարավային Ռուսաստանի ստորաձևերում հաստատվող հույները գլխավորապես Ղրիմից էին գաղթում, ապա Անդրկովկաս էին գալիս հիմնականում Պոնտոսից, Գաղիքի սկզբից XVIII դարի վերջին և XIX-ի սկզբին:

Պրբում հատուկ ընդգծվում է սկզբնաղբյուրների պակասը: Կցկտուր տվյալներով XVIII դարի առաջին քառորդում Ալավերդո: և Ախթալայի մեծադահանքերում աշխատանքի են եկել, փոքր քանակով հույներ, որոնք շուտով Ղևոնց են այնտեղից: Հույները դարձյալ Ախթալայի հանրերը եկել են XVIII դարի վերջին սուսանամյակներում: Նրանք ծագում էին Գյումրի խաներից և Կարինից, և բավական տոժեցին Օմար խանի և Աղա Մուհամմադ խան Ղարաբի արշավանքների մասնակ (բուտ ավանդության հույներն ունեցել են 700 սպանված և 836 զենված):

Հույների հաստատվելը Հայաստանում շարունակվեց 1801 թ. հետո, այստեղ են գալիս հույն վարպետներ Մուշից և Կարինից: Այս-

վերջու Մադան՝ գյուղում հաստատվում է հանքափորների 50 հույն ընտանիք, որոնք կատուցում են եկեղեցի և դպրոց: Հստ նույն ավանդությունների, Մազանի հույն բնակչությունը տնտեսական ծանր վիճակից դրզված, որ կապված էր արտահանվող պղնձի ցածր գների հետ, լքեց այդ գյուղը, ցրվեց հարևան գյուղերը՝ Կողոս, Յաղդան, Ալթու: հանք և Բենդիկ ու դարձավ հողագործ:

1813—1814 թթ. Բասենից Սալկայի (Թոնդթ, Յինցկարո գյուղում հաստատվեցին 95 հույն ընտանիքներ: 1822—1823 թթ. Գյումուշխանեից Յինցկարո եկան 100 հույն ընտանիքներ ևս, 15 ընտանիք էլ՝ Կարինից:

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի, ապա և Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումից դեռ առաջ, Գյումուշխանեից և Կարինից հայ և հույն բնակչություն գաղթեց դեպի Ռուսական կայսրության սահմանները: 1829 թ. ամռանը 85 հույն ընտանիք Կարսի և Գյումրիի վրայով հաստատվեց Սալկայի Յինցկարո գյուղում: 1830 թ. Սալկայի 2600 բնակչից 1900-ը հույներ էին, մնացածները՝ հայեր: 1832 թ. մարդահամարի տվյալներով, Սալկայի շրջանում կային 18 հունական բնակավայրեր՝ 532 ընտանիք (3381 հոգի):

XIX դարի 60-ական թթ. Պոնտոսից հույների և հայերի գաղթը դեպի Ռուսական կայսրության տարածք, գլխավորապես Արխադիա, կապված էր նաև Կովկասի հազարավոր մահ մեղադանների (գլխավորապես շերքեզների) ուսքով Պոնտոս և տեղացի բնակչության վրա նրանց գործադրած բռնություններով: Հույների և հայերի Պոնտոսից Ռուսաստան տեղափոխելու գործում մեծ դեր խաղաց Թիֆլիսի կոմիտեն (1866 թ.):

1860-ական թթ. Սալկայում հաստատված հույների թիվը հաշվվում էր 3500 հոգի: Նրանց գաղթը սկսվել էր Փոքր Ասիայի Կողոնիայից (Նապին Կարահիսար). նրանք Սալկա հասան Կարինի և Կարսի վրայով: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում և դրանից հետո թուրքական իշխանությունների գործադրած վայրագությունների վերաբերյալ գրքում բերված է անգլիացի ականատեսի վկայությունը, համաձայն որի 1877 թ. ամռանը քրդերն ու շերքեզները ավերակ դարձրին Կարսից արևմուտք ընկած հարյուր գյուղից ավելի (գլխավորապես՝ հայկական), որի դեմ բողոքեցին թուրքական նորաստեղծ և յուրատեսակ ազգային ժողովի հույն և հայ պատգամավորները:

Ստեղծված վիճակը արտագաղթելու մղեց Տրապիզոնի, Սերաստիայի, Ռոդոպոլսի (Լազիա-

8 Սխալմամբ գրվում է Միսխանս (էջ 79)

«Հետազոտական ծրագրի բանաձևը պատմա-
բյան արխիվից» (ղեկավարին ժամանակակից
ներքև և ականատեսների հուշեր), առանձին ա-
հատների սեփական արխիվներից և այլն: Լայ-
նորեն օգտագործված է սուպահիր գրականություն-
ներ՝ գրքեր և հոդվածներ, այդ թվում Հայաս-
տանի հույների վերաբերող: Հայ մասնագետ-
ների օտար լեզվով գրված գործերից հեղինակ-

2 Հայ հետազոտողին տեղյակ ենք պահել
Հայաստանի հույներին վերաբերող հունարեն
լեզվով լատի տեսած աշխատություններին:

Θεοφ. Ἀγαθονικιοῦς. Ἐραχὰ γεγενησὶ σὺν ἐπα-
ρχίαις Γαλιλίας καὶ Ἀρμενίαν τοῦ Κάρου Καυ-
κασοῦ, Ποντιακῆ Ἔτα 74 Ἰ β ο φ. Ա դ ա թ ո-
ն հ կ դ ի ս. Ողբերգական իրադարձությունը՝
Կովկասի Կարսի Գյուլա և Արղահան նահան-
ներում (sic), «Պոնտական օջախ» պարբեր-
ական, № 74 (հուլիս-օգոստոս-սեպտեմբեր 1958)
էջ 132—137: Ն ու յ ն ի՝ Օ տօրախիւս սթրատ-
աթօսթօսէս ատօ տըն Գալիլիա (թուրքական բա-
նազը քաղվում է Գյուլայից, նույն տեղում)
№ 73 (ապրիլ—մայիս—հունիս, 1958), էջ 132:
Γεωργίος Γρηγορίου α' δ' τ' ε'. Օ Սոնտօս քա-
տօ Կարս (Գ ի օ ռ ց ի ո ս Գ ռ ի դ օ ռ ի ա դ ի ս.
Պօնտոսը և Կարսը. Աթենք, 1973): Լ ա ս Վ յ ռ
Καλφογλου. Օ: Ἐλληνες ἐν Καυκασῶ
Ἰστανῶν ἡμερῶν 4 α ἰ φ ο ρ ἰ ο ς. Կովկասի հույ-
ները. Աթենք, 1905): Լ ա ս Վ յ ռ Գ. Կ α ζ τ-
α ρ ἰ ο ῦ ς, II, «Ἐξοδος» τῶν Ἑλλήνων τοῦ Κάρου
τῆς Ἀρμενίας (1919—1921) (Ի ս տ ա ն ի ս
Գ. Կ ա դ ա ռ ի դ ի ս. Հայաստանի Կարսի
հույների լեզու, 1919—1921. Սալոնիկ, 1920
Տուλιանոս Մաυρογένης. Το Κυβερν-ιόν Καρς τοῦ
Ἀντικαυκάσου (Καρρσκή ὄβλαστ) καὶ τὸ ἐν
αὐτῷ ἑλλητικὸν στοιχεῖον κατὰ τὴν περιόδον
1878—1920 (Ս տ ի ի հ ա ն ո ս Մ ա վ ը ռ գ Լ-
ն ի ս. Անդրկովկասի Կարսի նահանգը և նրա
հունական տարրը 1878—1920 թթ. Սալոնիկ
1963. X. A. Μουρατζαγιδης. Οἱ ἐν Καρρ-
«Ἐλληνες (Ն. Ա. Մ ու ը ա տ ի ա ն ի դ ի ս.
Կարսի հույները, «Ξενοφάνης» հանդես № 3
(1907—1908), էջ 360—365: Κ ω ν σ τ. Κ.
Παπουλιδης. Օ) Ἑλ. Βενιζελος καὶ ὁ Ἑλι-
λθνισμος τοῦ Καυκάσου το 1914, Βαλκανικὰ Συμ-
μειχτὰ 3 (1989), 4 ո ն ս տ. Կ. Պ ա պ ու լ ի-
դ ի ս. էլ. Վ ն ի դ զ ի ո ս ը և Կ ո վ կ ա ս ի հ ու յ ն ը
1914 թ., էջ 131—171: X ρ. Σ α μ ο υ γ λ ι-
δ ἡ ς. Το Χρονικὸ τοῦ Καρς (Ն թ. Մ ա մ ու ի-
ի դ ի ս. Կարսի ժամանակագրությունը. Ա-
թենք, 1987): Χ ρ ἰ σ τ ο φ ο ρ ο ς Τ σ ε ρ τ ἰ χ.
Στὶς ἐπάλξεις τοῦ Καρς (Ն ռ ի ս տ ո թ օ ռ ո ս.
Ց ե ռ ա թ հ. Կարսի դիրքերում. Լ ս ը ի ս ա, 1983):

ներին ծանոթ են Ռ. Գ. Սյունու, Ս. Աֆանա-
յանի, Ա. Շ. Արաույանի, Գ. Բուրնաթյանի,
Ռ. Շովհաննիսյանի, Ա. Ս. Խախանովի, Գ. Կար-
զանովի, Ս. Կ. Մաթթոյանի, Կ. Մաթթոյանի,
Վ. Օշականի, Ա. Ար. Ալաունյանի, Ա. Օ. Սաչ-
զրսյանի, Ծ. Ղ. Սարգսյանի և Ռ. Գ. Սահակյա-
նի, Մ. Վարանգյանի և այլոց աշխատություն-
ները: Ամբողջության մեջ օգտագործված գրա-
կանությունը 300 միավորից ավելի է:

Նաբագիրը նշում է տեխնիկական այն զրո-
ւարությունները, որոնք թույլ չեն տվել օգտվե-
լու գլխավորապես նախկին Խորհրդային Միու-
թյան արխիվներից:

Ազգային փորրամասնություններ կան և
Հայաստանում: Թեև բնիկ ազգի մեջ նրանք
չեն ստեղծվում և կազմում բայց նրանց պատ-
ստությունը մեր պատմության մի զրգված է:
Այդ ազգերից մեկը Հայաստանի հույներն են:
Հետաքրքիր է իմանալ, ե՞րբ են հաստատվել
Հայաստանում, որտեղից և ինչու են գաղթել
մեր երկիրը, ինչով են զբաղվել: Եթե մինչև
Հայաստանի խորհրդայնացումը նրանց մասին
քիչ թե շատ գրվել է, ապա խորհրդային մա-
մանակաշրջանում Հայաստանում ոչինչ չի գր-
վել կամ որովհետև դրանով զբաղվող (նախ և
առաջ ազգությունը հույն) չի եղել, կամ էլ,
հատկապես 30-ական թթ. երկրորդ կեսից, ստա-
լինյան բռնությունների ժամանակ, մյուս «փոքր
ազգությունների» շարքում հույները նույնպես
հայածված տարր էին: Ինչ որ գրվել է՝ հրա-
տարակվել է արտասահմանում: Ինչ հայտնի է
միայն մեկ աշխատություն՝ էլեֆթերի Խարա-
ցիդիսի ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտում 1990 թ. պաշտպանված դիսեր-
տացիան Χαραυιαινε Ἐλεφτερηφ.
Χοζυϊσθεννην βυτ η ματηριαλη κυλ-
τυρα γρησσεκογο ηασεληνη Βοστωνηφ
Αρμενηη ηο βτωρηφ ηολωνηη ΧΙΧ—ηα-
ηε ΧΧ ηεκα, Αητορεφ. ηνε. ηανδ. ηετ. η.
Ερεβαη, 1990 (հեղինակը արտագաղթել է
Հունաստան):

Սույն շարադրանքը զուտ գրախոսական չե-
այն հետապնդում է մի նպատակ՝ բնթերգողնե-
րին ներկայացնել, որքան դա հնարավոր է, վե-
րստիչալի ծավալուն գրքի համառոտ բովանդա-
կությունը, այն էլ ոչ ամբողջությամբ: Ինքնու-
տիկյան հասկանալի է, որ ծանրանալու ենք
հատկապես այն հատվածների վրա, որոնք վե-
րաբերում են հիմնականում Հայաստանի հույ-
ներին:

Գրքի «Առաջին մասը» բաղկացած է ութ
գլխից (էջ 43—221) և վերաբերում է «Հույնե-
րի գաղթներին ռուսական տարածքներ ՄՄ դա-
րից մինչև 1917 թ.»: Այստեղ խոսվում է Մոսկ-

վայի մեծ իշխանութիւնում և Ղրիմում սուլ- ղացաս հունական հնագույն գաղթաւայրելի մասին: Հնդիւնականների կարծիքով, հույներն գաղթելու են դրդել օսմանյան տիրապետութեան հաստատումը հունական Արևելքում, Ղոն-Սո- ֆիա Պալեստինայի ամուսնութիւնը Իվան 11-ի հետ 1472 թ., ապա՝ ռուսական Պետրիարքու- թեան հռչակումը 1589 թ.:

Առավել հանգամանորեն խոսվում է Ղրիմի հունական գաղութի մասին (հատկապէս XV— XVII դդ.): Հնդիւնականների ձեռքում եղած ժողո- վրդագրական տվյալների հիման վրա ցույց է տրվում, որ Կաֆալում 1481 թ. ապրում էին 8—7000 բրիտոնականներ: XVI դարի սկզբում նրանք 5412 ընտանիք էին հաշվում: Ուման- յան իշխանութիւնների կողմից 1529 և 1545 թթ. անցկացված մարդահամարներից առաջինի տրվ- յալներով հարավային Ղրիմում ապրում էր 35986 մարդ, որից հույներ՝ 19038, հայեր՝ 7832, մահմեդականներ՝ 7373, Իրաններ՝ 1271:

Հույների արտագաղթը Ղրիմից Մերձագոյ- յան շրջան տեղի ունեցավ 1778 թ.: Նրանք հաս- տատուլցիներ Եկատերինոսլավում և Մարիուպո- լում: Գաղթեցված բրիտոնականների թիվը հաշ- վովում էր 31000 հոգի, որոնցից 12000-ը հա- յեր էին:

Հույների թիվը ամեն XVIII դարում, հատ- կապէս Պետրոս I-ի և Եկատերինա II-ի վա- ռած քաղաքականութեան շնորհիվ:

Մեկ համար հետաքրքրութեան է ներկայաց- նում «Անաջին մասին» 3-րդ գլուխը՝ Հույների սուլթանի վերաբերմանը Մերձագոյնում: Եթէ Հարավային Ռուսաստանի տարածքներում հաստատվող հույները գլխավորապէս Ղրիմից էին գաղթում, ապա Անդրկովկաս էին գալիս հիմնականում Պոնտոսից: Գաղթը սկսվեց XVIII դարի վերջին և XIX-ի սկզբին:

Գրքում հատուկ ընդգծվում է սկզբնադարյու- նների պակասը: Կցկտուր տվյալներով XVIII դարի առաջին քառորդում Ալավերդո: և Ախթա- լայի մետաղահանքերում աշխատանքի են եկել փոքր քանակով հույներ, որոնք շուտով հեռաց- են այնտեղից: Հույները դարձյալ Ախթալայի հանրերը եկել են XVIII դարի վերջին աստ- նամյակներում: Նրանք ծագում էին Գլումոս, խաննից և Կարինից, և բավական տո՛ժեցի- Օմար խանի և Աղա Մուհամմադ խան Ղաջարի արշավանքների ժամանակ (բոտ ամուսնութեան հույներն ունեցել են 700 սպանված և 836 գեր- ված):

Հույների հաստատուլելը Հայաստանում շու- րունակվեց 1801 թ. հետո, այստեղ են գալիս հույն վարպետներ Մուշից և Կարինից: Այս-

վերջու Սադան⁸ գլուխում հաստատվում է հանքափորների 50 հույն ընտանիք, որոնք կա- ռուցես են եկեղեցի և դպրոց: Ըստ նույն ա- վանդութիւնների, Մազանի հույն բնակչութեան տնտեսական ծանր վիճակից դրդված, որ կապ- ված էր արտահանվող պղնձի ցածր գների հետ, լքեց այդ գլուխը, ցրվեց հարևան գլուխերը՝ Կոզոս, Յաղդան, Աչքու հանք և Բենդիկ և դարձավ հողագործ:

1813—1814 թթ. Բասենից Սալկայի (Թոնդո, Յինցկարո գլուխում հաստատուլցիներ 95 հույն ըն- տանիքներ: 1822—1823 թթ. Գլումուսից Երևանից և Կարինից էլ՝ Կարինից:

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի, ապա և Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումից դեռ առաջ, Կլուսուշխանից և Կարինից հայ և հույն բնակչութեան գաղթեց գեպի Ռուսական կայս- րութեան սահմանները: 1829 թ. ամռանը 85 հույն ընտանիք Կարսի և Կլումրիի վրայով հաստատուլց Սալկայի Յինցկարո գլուխում: 1830 թ. Սալկայի 2600 բնակչից 1900-ը հույ- ներ էին, մնացածները՝ հայեր: 1832 թ. մար- դահամարի տվյալներով, Սալկայի շրջանում կային 18 հունական բնակավայրեր՝ 532 ըն- տանիք (3381 հոգի):

XIX դարի 60-ական թթ. Պոնտոսից հույ- ների և հայերի գաղթը գեպի Ռուսական կայս- րութեան տարածք, գլխավորապէս Արևազի, կապված էր նաև Կովկասի հաղարավոր մահ- մեղահանների (գլխավորապէս շերքեղների) հոսքով Պոնտոս և տեղացի բնակչութեան վրա նրանց գործազրած բռնութիւններով: Հույների և հայերի Պոնտոսից Ռուսաստան տեղափոխե- լու գործում մեծ դեր խաղաց «Ինֆլիսի կոմի- տեն» (1866 թ.):

1860-ական թթ. Սալկայում հաստատված հույների թիվը հաշվում էր 3500 հոգի: Նրանց գաղթը սկսվել էր Փոքր Ասիայի Կողոնիայից (Շապին Կարահիսար): Նրանք Սալկա հասան Կարինի և Կարսի վրայով: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում և դրանից հե- տո թուրքական իշխանութիւնների գործազրած վայրագութիւնների վերաբերյալ գրքում բեր- ված է անգլիացի ակնատեսի վկայութիւնը, համաձայն որի 1877 թ. ամռանը քրդերն ու շերքեղները ավերակ դարձրին Կարսից արև- մուտք ընկած հարյուր գլուխից ավելի (գլու- խավորապէս՝ հայկական), որի դեմ բողոքեցին թուրքական նորաստեղծ և յուրտեսակ ազգա- յին ժողովի հույն և հայ պատգամավորները:

Ստեղծված վիճակը արտագաղթելու մղեց Տրապիզոնի, Սեբաստիայի, Ռուդոպոլսի (Լազիս-

⁸ Սխալմամբ գրվում է Միսիսանա (էջ 79)

տան), Խաղտիցի, Կարիկի, Կազմիայի, Սեօկ-
 օարիայի (Նիքոսար) և Ամասիայի մեծաթիվ
 հայ և հույն քրիստոնյաների: Նրանք հաստատ-
 վեցին Կովկասի մահմեդականների դատարկած
 շրջաններում: Գլխավոր զանգվածը հաստատ-
 վեց Կարսի գյուղերում: 1830 թ. գարնանը
 Սամսունի և Կերասուսի (Գիրեսուն) միջև ըն-
 կած շրջանների հազարավոր հույներ և հայոց
 պատրաստված էին գաղթի: Տրապիզոնի հույն
 հյուպատոս Ն. Բեցիոսը հունական կառավար-
 րությանը շատ զեկուցագրում նշում էր, որ
 Գլումուշխանեից Կարս եկել և հաստատվել է
 100 հույն ընտանիք:

Գրքում ցույց է տրվում, որ 1880-ական թթ.
 սկզբից Ռուսաստանը ավելի շահագրգռված էր
 Պոնտոսից Ռուսաստան հույն գաղթականներին՝
 տեղափոխելու, քան թե հայերի խնդրով: Դա
 նկատել էր Տրապիզոնի անգլիացի հյուպատոս
 Ալֆրեդ Բիրլոտին՝ բացատրելով, որ Ռուսաս-
 տանը շահագրգռված էր, որ հայերը մեան
 «հայկական վիլայիթներում», որպեսզի օգտա-
 գործվեն թուրքական լծից իրենց ազատագրելու
 համար: 1880-ական թթ. հույների առավել
 մեծ զանգվածը հաստատվեց Կարսի շրջաննե-
 րում, որոնք համարվում էին առավել բերրի
 և գտնվում էին իրենց լքած օջախներին մո-
 տիկ: 1878—1882 թթ. ընթացքում Տրապիզո-
 նում հույն հյուպատոս Ն. Ֆունդուլիսի (1882—
 1883 թթ.) տվյալներով Կովկաս գաղթեց 17100
 հույն, շիշլալ հյուպատոսը XIX դարի սկզբից
 մինչև իր պաշտոնավարության ժամանակը
 Պոնտոսից արտադրված հույների թիվը հաս-
 ցրելում է 95100 հոգու: Գրքում լավագույնցված
 են համարվում հույն գրող Պ. Տոպալիդիսի
 բերած թվերը, համաձայն որոնց XIX դարում
 Ռուսաստան է գաղթել 350000 հույն (տվյալ,
 որ հետագայում որոշորովեց բազմաթիվ հեղի-
 նակաների կողմից) և այդ թվի իրականությունից
 հեռու լինելը հաստատվում է 1897 թ. Ռուսաս-
 տանում անցկացված մարդահամարով, ըստ որի
 Կովկասում և Անդրկովկասում ապրում էին
 105169 հույներ, համայն Ռուսաստանում՝
 207536, ըստ 1897 թ. մարդահամարի: Անդրը-
 կովկասում ամենամարդաշատ հույն գաղութը
 Սալկայինն էր, որի 26673 ընկալությունից
 10799-ը հույներ էին, 7178-ը՝ հայեր, 3500՝
 վրացիներ, 2530 թաթարներ, 439 գերմանացի-
 ներ և 186 զնշուններ:

Անդրադառնալով ռուսական կառավարու-
 թյան ռուսացման քաղաքականության ծրագրի.
 գրքում ցույց է տրվում, որ այն տարածվեց
 Անդրկովկասի ոչ միայն ոչ ուղղափառների/
 (այդ թվում և հայերի), այլև ռուսների հետ
 նույնադավան հույների վրա, որոնք ստիպված

էին ռեկոտական և «հեղեղեցական» գաղթեցնե-
 րի կազմին պահել իրենց սեփական մասնավոր
 և համայնքային գաղթեցները, սեփական եկեղե-
 ցիները, հույն ուսուցիչներ և քահանաներ, որոնց
 չրավիրում էին Պոնտոսից և Փոքր Ասիայի այլ
 շրջաններից՝ ենթարկվելով Տիեզերական պատ-
 րիարքությունը և ոչ թե ռուսական Սբրազան
 սինոդին:

Հարուստ են տվյալները Կարսի նահանգի
 ռուսական բնակչության վերաբերյալ: Ըստ Կար-
 սի նահանգի 1907 թ. «Օրացույցի», հույներն
 այստեղ 36315 հոգի էին, իսկ հույն բնակչու-
 թյանը գյուղերը 45-ն էին (այլ տվյալներով՝
 39301 կամ 37456 հույն և 74 կամ 76 գյուղ):

Գրքի առանձին գլխում («Առաջին համաշ-
 խարհային պատերազմը և Ռուսաստանի և
 Պոնտոսի հույները (1914—1918 թթ.)») ցույց
 է տրվում, թե ցարական վարչակարգի տապա-
 լումն ու դրան հաջորդած Հեկտեմբերյան հեղա-
 փոխությունը հույների համար ինչպիսի աղե-
 տալի հետևանքներ ունեցան: Ըորոտի շրջա-
 նում սկսեցին գործել թուրքամետ լազեր և ա-
 ջարներ: Պատերազմի հենց սկզբին գլխավին
 ոչնչանալու վտանգ ապրեցին Կարսի հունա-
 կան գյուղերը: Թուրքական զորքերը 1914 թ.
 դեկտեմբերի 23-ին և 25-ին գրավում և թալանում
 են Օլթիի և Արդահանը, պաշարում Սարիղամիշը
 (20—31 դեկտեմբերի): Հունական հյուպատո-
 սական վկայությունների տվյալներով, այս
 շրջանում Կարսի նահանգի շուրջ 20000 հույներ
 հեռացան դեպի արևելյան և հյուսիս-արևելյան
 նահանգները: Օլթիի և Սարիղամիշի հույները
 շարժվեցին դեպի Կարս, իսկ Արդահանում հաս-
 տատվածները ապաստանեցին Ախալքալաքի
 հունական գյուղերում: Այս շրջանում միայն
 Ախալքեն և Երևան էին գաղթել 8900 հույներ,
 որոնց մի մասը առավել ապահովության հա-
 մար շարժվեց դեպի Թիֆլիս և Հյուսիսային
 Կովկաս: Ռուսական հակահարձակմամբ Պոնտո-
 սի մեծ մասը, հայկական ընդարձակ տարածք-
 ները (Թիֆլիս, Մուշ, Կարին, Երզնկա) գրավ-
 վեցին: Այս շրջանում թուրքերի կողմից խա-
 ղաղ բնակչության նկատմամբ գործած վարա-
 գությունները պատճառ դարձան հույն բնակ-
 չության՝ իր հնագույն բնակավայրերից արմա-
 տալիս արվելուն: Գրքում նշվում է, որ 1914—
 1917 թթ. ընթացքում հյուսիս-արևելյան Փոքր
 Ասիայում ծավալված հալածանքները, գործա-
 դրված մեթոդները կարելի է համարել մի քա-
 նի տարի առաջ տեղի ունեցած հայոց ցեղա-
 սպանության կրկնողությունը հույների վերա-
 բերյալ՝ ամբողջացումը մի ծրագրի, որ սկիզբ
 էր առել 1913 թ. Հոնիայի հույների նկատմամբ,
 հայերի և հույների հանդեպ գործադրված հա-

լածանքները նույն դրամի երկու երեսն էին, այսինքն՝ իրականացվում էր երիտթուրքերի քաղաքականությունը՝ այլազգիների բոնի տեղահանություններով և ոչնչացմամբ, երկրի թուրքացմամբ: Ֆրբում ցույց են տրված նաև Պոնտոսի հույների կողմից թուրքերի գեմ մղած պարտիզանական կռիվները, հատկապես Պոնտոսի լեռնային շրջաններում, ապա նաև Կարսի նահանգի հունական գյուղերի գինյալ ջոկատների պայթյալը 1917-1918 թթ. ձմռան ամիսներին՝ թուրքական և քրդական հարձակումների առաջն առնելու համար:

Առաջին մասին 7-րդ գլուխը կրում է «Ազգությունների հանդեպ ցարական քաղաքականությունը և հույների կազմակերպությունը» վերնադիրը: 1897 թ. մարդահամարի տվյալներով կայսրության ոչ ուս տարրը կազմում էր րնակալության 56,6 տոկոսը: Ռուսացման քաղաքականությունը տարածվում էր գլխավորապես ազգային մեծ խմբերի վրա և հույն տարրը նման քաղաքականության շրջանակներից դուրս մնաց: Հիշվում է Օդեսայի հունական համայնքը, որտեղ հունական կրթությունը բավականին ազատ էր: Սակայն Կովկասում վիճակը հուսահատական էր: Անկախ վարչական սահմանափակումներից, հույների շրջանում սուսերենի տարածումը վարչակարգի պարտադրող միջոցներին չէր վերաբերում, այլ ուներ սոցիալական դրդապատճառներ՝ ավելի դուրին դարձնելու մասնակցությունը վարչական մեխանիզմին, սոցիալական տիրապետող մարմնի մասը կազմելու: Դա վերաբերում էր Ռուսաստանի հույների հատկապես ավելի բարձր դասին: Այդ հանգամանքը, սակայն, հատկապես XIX դարի կեսերից սկսած, դարձավ ճակատագրական՝ նախահայրերի լեզվի մոռացությունն պատճառով: Նշանավոր հույն ընտանիքներ աստիճանաբար ուսուցանելու Այդ գործընթացը վերաբերում էր գլխավորապես եվրոպական Ռուսաստանի քաղաքային հարուստ հույն ընտանիքներին: Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի գյուղական հույն բնակչությունը, որ առաջացել էր XIX դարի զանգվածային սեղանափոխություններից, մնաց անզրապետ: Ի դեպ, այն այդպիսին էր նաև Պոնտոսից դարձնելու առաջ: Այդ շրջանի գաղթականներից ոման՝ անգամ թրքախոս էին և նրանց Կովկասի այլալեզու «ազգային» խմբերից առանձնացնողը ուղղափառ հավատքն ու նախահայրերի ավանդույթներն էին, և ուսում անվանումը: Կրթություն ստանալու հնարավորության պակասը, բայց և ուսուցիչի հետ նույնազգական լինելը, ուս և հույն աշխարհի միջև առկա պատմականորեն փոխադարձ համակրանքը դարձել էին

Ռուսաստանի հույն բնակչության ուսուցանող գործընթացի լայն և արագ ծավալման պատճառը:

Կայսրության հունական տարրի՝ հյուրընկալող շրջապատից մեկուսանալու ձգտումը աչքի է ընկնում գյուղական բնակչության շրջանում, հատկապես Կարսի նահանգում: Սալկայի չքրջանի գյուղերում մինչև XIX դարի վերջը հունական դպրոցներ չկային: 1882 թ. կազմակերպվեց Կարսի հունական դպրոցը, որը 1898 թ. դարձավ կիսագիմնազիա, իսկ 1908 թ. արդեն դարձել էր ուսական դպրոց: Փակման առիթը ազգայնական տրամադրություններ սնուցանելու մեղադրանքն էր: XX դարի սկզբին Կարսի ուսական լիցեյում, որ սովորում էին բավականին թվով հույներ, սկսվեց նոր հունարենի դասավանդումը:

Ֆրբի «Առաջին մասին» վերջին՝ 8-րդ գլուխը վերաբերում է ժողովրդական մամուլին նախահեղափոխական Ռուսաստանում (1905—1917)»: Հնդգծելով Ռուսաստանի հունական համայնքներում XIX դարում հունական օրաթերթի կամ պարբերականի կատարյալ բացակայությունը, ցույց է տրվում, որ այդպիսիք սկսեցին հրատարակվել XX դարի սկզբներից, գլխավորապես Օդեսայում: Հունական առաջին քաղաքական-բանասիրական թերթը (Սևզգային պայթյալ) լույս տեսավ Բաթումում 1908—1914 թթ.: Թերթը սկզբնական շրջանում կապեր էր հաստատել հայկական «Հորիզոն» լրագրի հետ, կապեր, որոնք, սակայն, 1911 թ. հոկտեմբերին ընդհատվում են: 1912 թ. «Ազգային պայթյալը», որ վերանվանվեց «Ազգային ձայնի», փոխադրվում է Եկատերինոգոր (Կրասնոդար), իսկ մեկ տարի անց՝ Ռոստով, վերականգնելով նախնական անվանումը: Բաթումում սկսեց լույս տեսնել «Արգոնավտ» թերթը, որը շարունակեց պաշտպանել հույն-հայ համագործակցության գաղափարը՝ որպես Թուրքիային հակադրվելու կարևոր ելքի: Այս գլուխը գրված է հիմնականում Ար. Ուլունյանի «Greek National Press and the URSS (1906—1939) հոդվածի հիման վրա, տպված «Les relations entre les peuples de l'URSS et les Grecs, fin du XVII-eme—debut du XX-eme s. Սալոնիկ 1992 ժողովածուում: 1916—1917 թթ. Քիֆլիսում լույս տեսավ «Կովկասի հույների ձայնը», որից հայտնի է միայն անունը: Իսկ այս շրջանում Բաթումում հրատարակվեց «Ազատ Պոնտոս» հունական շաբաթաթերթը: Լույս տեսավ 138 համար և փակվեց 1920 թ. նոյեմբերին:

Ֆրբի «Ծրկրորդ մասը» (էջ 223—486)՝ «Խորհրդային Միության հույների վերաբնակեցումներն ու տեղահանությունները, կազմակեր-

պաթյունն ու՝ գաղափարախոսությունը (1917—1996 թթ.)» բաղկացած է 14 գլխից:

Փետրվարյան հեղափոխությունը երկրի հասկանալի փոքր ազգայնությունների շրջանում հույսեր ներշնչեց ավելի ազատ, պակաս կենտրոնացած ներքին բազաթականության հանդեպ Ռուսաստանի հունական ղեկավար տարրը հույս ուներ ձևաբերել զոնն դպրոցական ինքնավարություն, ապա նաև՝ եկեղեցական: Վրա հասավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, Ռուսական կայսրության հույն բնակչությունը սկսեց տրոփվել: Մեծ մասը շրջապատեց բաղնիկներին, առանց անցնելու, սակայն, հակահեղափոխության ճամբարը: Ավելի փոքր մասը իր սոցիալական կացության պատճառով որոշեց համագործակցել բաղնիկների հետ: Սալկայի բաղնիկյան բլոկը, որ ձևավորվեց 1918 թ., բաղկացած էր գլխավորապես հույն գյուղացիներից, որոնք հավատում էին բաղնիկների կողմից հողը գյուղացուն տալու խոստումներին: Կարսի նահանգի «Ժողովրդական պատգամավորների կոմիտեի» շարանումից բաղկացած կոմիտեիներից մեկը հույն էր (Բ. Պոլիտով): Մնացածները՝ մեկ հայ, մեկ մուսուլման և մեկ ռուս: Վերջապես թվական առումով հույների սակավամիջ մի խումբ հասցրեց Պետրոգրադում պարտված, բայց Անդրկովկասում (հատկապես Վրաստանում) հզոր մենշևիկներին կուսակցությանը, ինչպես և Դաշնակցությանը:

Բաղնիկների բռնությունները ստիպեցին Հարավային Ռուսաստանի և Կովկասի հույներին փորձել գաղթելու Հունաստան:

Փետրվարյան հեղափոխությունից հետո փորձեր եղան և Ռուսաստանի հունական տարրի համախմբման ուղղությամբ: Առաջին փորձերից մեկը 1917 թ. մայիսի 3-ին Քիֆլիսում Անդրկովկասի հույների «Ազգային կոնֆերանսի» իրավիճումն էր, 1917 թ. հունիսի 29-ին Տագանրոգում գումարվեց Ռուսաստանի հունական համայնքների համագումարը, որն ստեղծեց «Ռուսաստանի հույների միությունը»՝ 12 կենտրոններով, որոնցից 9-րդը՝ «Քիֆլիսի և Նիքապոլի» նահանգինն էր, 10-րդը՝ «Կարսը Երևանի նահանգի հետ»: «Կենտրոնական խորհրդի» նստավայրը պիտի լիներ Ռոստովը: Նպատակը՝ հունական դպրոցների և հունարեն լեզվի ուսուցման սեմինարներն էին, Այդ սեմինարների աշխատանքներին մասնակցեցին Կարսի նահանգի 150 ուսուցիչներ: Առաջին նամաշխարհային պատերազմի նախօրեին Կարսի նահանգում կար առկա 78 հունական դպրոց՝ 123 ուսուցիչներով: Երևանի նահանգում կար 3 դպրոց՝ 6 ուսուցիչներով:

Հույների մյուս խնդիրը՝ Ռուսաստանում

ուսուցանել եկեղեցուց անկախ դասնալի նր. ուսուցիչներն արված հունական եկեղեցիների երեսուցանալը (այդ թվում Կովկասում և Անդրկովկասում): Կարսի նահանգում կար 67 հունական եկեղեցի՝ 67 քահանաներով, Երևանում՝ 3 եկեղեցի 3 քահանաներով: Հարց էր բարձր-ցվում 6. նպագադույնը 3 եպիսկոպոսությունների կարգավորման մասին, այդ թվում՝ Կարսի, Կարսի նահանգի և Երևանի նախկին նահանգի համար): Սալկայի, Բելառուսի, Արթուրայի և Սալկայի), Քիֆլիսի և Բարձր նահանգների համար:

Անդրկովկասի հանրապետությունների հրաշակամբ եկեղեցական հարցը այլ ընթացք ընտանացավ: Խոսքը վերաբերում էր Հայաստանի և գլխավորապես Վրաստանի ազգային եկեղեցիներից անկախ լինելուն: Հայաստանի հույները որոշեցին ենթարկվել Տրապիզոնի մետրոպոլիտությանը:

Բայց Տրապիզոնի համագումարին հուզող հարցերից կարևորը հունական բնակչության պաշտպանությունն էր՝ հայ-վրացի-ադրբեջանցի հակամարտությունից առաջացած անապահովության, հատկապես 1917—1918 թթ. ձմռան սկսված թուրքական հակահարձակումների պատճառով: Դեռ 1917 թ. մայիսին Քիֆլիսում գումարված «Ազգային կոնֆերանսը» որոշել էր կազմակերպել հունական զորամիավորումներ, Ռուսական ռազմաճակատի փլուզումը ստիպեց 1917թ. նոյեմբերի 27-ին Քիֆլիսում գումարել Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների խորհրդակցություն, որում որոշվեց կազմակերպել ազգային զորամասեր, որոնցում հույները պիտի ունենային մեկ դիվիզիա՝ բաղկացած երեք գնդից, որոնց կենտրոնները պիտի լինեին Քիֆլիսում, Կարսում և Մանգլիսում: Կովկասի հունական այդ դիվիզիայի Կարսի գունդը պիտի պաշտպաներ Ղարաղուրդանի, Մենդերեկի և Արդահանի սահմանամերձ շրջանները: Բայց թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Սարիղամիշ, Կարս և Արդահան, Բրեստ-Լիտովկայի շարաքաստիկ հաշտության կնքումը հույների գաղթի նոր ալիքներ առաջացրեցին դեպի Հայաստան և Վրաստան, այնտեղից էլ դեպի Հյուսիսային Կովկաս, Սև ծովի ափամերձ շրջանները: Այդ շրջանում 10000 հույներ լքեցին Կարսի և Երևանի նահանգները:

Այս տեղափոխությունները, որոնք արմատախիլ էին անում Պոնտոսի և Կարսի հույն տարրը, մեծապես ավելացնում էին Ռուսաստանի հույն բնակչության թիվը: Պոնտոսից և Կարսից 1918—1920 թթ. ընթացքում Ռաթումում հաստատվեց 4000 հույն, Սալիսում՝ 15000, նախապատիվի հույն հյուպատոսը 1919 թ.

ակզբների իր զեկույցում նշում էր Կարսի հույնների բնակավայրերը իրար ետևից նավահան գիստ ժամանող նավերի մասին: Այդ հույներին 9000 ռոպի անցան Հունաստան:

Հունաստանի հնասատարությունների և նախարարության առաքելության (1919 թ.) կողմից պատրված Ռուսաստանի հույների մարդահամարի տվյալներով Անդրկովկասում, այսուհասին Կովկասում, Հարավային և Հյուսիսային Ռուսաստանում (նաև Ուկրաինայում) ապրում էր 593700 հույն, որոնցից 30350-ը Հայաստանում: Սալկայի գյուղերում՝ 35000, Սուխումում՝ 45000, Ադրբեջանում՝ 15000:

Հայ-վրացական պատերազմը բացասաբար անդադարեցրեց Ախալքալաքի և Լոռվա հույների վրա: Ռեակցիոնար, հույն տարրը չէր ցանկանում ներքաշվել երկու քրիստոնյա երկրների միջև լինող պայքարի մեջ, այդ իսկ պատճառով չէր ուզում զինվորացի դառնալ մեկ կամ մյուս կողմի բանակի շարքերում: Այս սկսածամային պահին հունական կառավարությունը շտապեց իր ներկայությունը դպարի դարձնել և արավային Ռուսաստանում և Անդրկովկասում: Հայտնի է Ի. Ստավրինսկիի և Գ. Կաթնիտի տիպի ակտիվ գործունեությունը: Հունական կառավարության համար ավելի ընդունելի լուծում համարվեց հույների Պոնտոս վերադառնալը: Բայց Պոնտոսում և ամբողջ արևելյան Փոքր Ասիայում տեղի ունեցող դեպքերը լավատեսություն չէին ներշնչում: Փեմալական ուժերի արագ հաստատումը ոչ մի տեղիք չէր թողնում ենթադրելու, թե գաղթած քրիստոնյաները կկարողանան վերադառնալ իրենց օջախները: Հարցը էլ ավելի բարդացավ, երբ բոլշևիկները մտերմացան Մ. Փեմալի հետ (1919 թ. սեպտեմբերից սկսած): 1919 թ. հուլիսի 14-ին Կարսում գումարվեց Հայաստանի հույների և թաղին կոնֆերանսը, ուր հարց բարձրացավ Կարսի հույներին Հայաստանում վերաբնակեցնելու մասին: Հակառակ հայկական կառավարության ջանքերին՝ թույլ շտապ հույների հաշտումը Կարսից, Կարսի գաղթականների առաջին խումբը (ընդամենը 500 հոգի) 1919 թ. հոկտեմբերին հասավ Բաթում: 1920 թ., երբ հայ-թուրքական ընդհարումները սաստկացան, աստիճանաբար հույներից դատարկվեցին Սողանլուի, Խորասան, Կաղզվան և Կարսի շրջակայքի գյուղերը: Այդ տեղափոխությունը դարձավ էլ ավելի հրամայական, երբ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեց խորհրդային իշխանությունը և բոլշևիկյան ու քեմալական ուժերի կապը դարձավ անմիջական: Հայաստանը այժմ պետք է դիմադրեր երկու թշնամիների: Այս վիճակը ի վերջո պիտի որոշակիորեն ազդեր հունական բանակի արշավանքի վրա: Փոքր Ասիայում:

Կարսից հեռացող հույների ղեկավարները աղաւ հույներ էին սածում, թե ապագայում իրենց կհաջողվի վերադառնալ Կարս: 1920 թ. օգոստոսի 14-ին քաղաքի հոգևորականության և քաղաքացիական ղեկավարության ներկայությամբ հույն արևիմալդրիտ Գեորգիոս Կարսի պիդիսը Հայաստանի հույների խորհրդի Առաջինից հայ հոգևոր ներկայացուցիչ Խորեն Ստամբուլյանին ռժամանակավորապես հանձնեց Տիրոջ Այլակերպության հունական մայր տաճարը, բակի շինությունները, Սուրբ Գեորգի շին տաճարը և Կարսի հունական դպրոցի շենքը: Գյուլայի և Օլթիի գյուղերը դատարկվեցին 1920 թ. սեպտեմբերին: Արդահանի հունարենակ գյուղերը՝ 1921 թ. փետրվարին:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը վրաստանում (1921 թ. փետրվար) Բաթումով անցան 52878 հույն, որոնցից 25000-ից ավելին Հայաստանից էին: Հունաստանը հնարավորություն չունեւր բնդունելու մեծ թվով գաղթականների: Բացի այդ, հունական կառավարությունը չափազանց մտահոգված էր, որ խորհրդային Ռուսաստանից գաղթողները իրենց բռնների հետ կարող էին Հունաստան բերել բոլշևիզմի «բացիլը»: 1924 թ. սարսի 8-ին Հունաստանը ճանաչեց խորհրդային Միությունը, բայց հույների Հունաստան գաղթելու շարժումը չդադարեց: 1924 թ. հոկտեմբերի 8-ին Աթենքում ստորագրված համաձայնությամբ նախատեսվում էր Կովկասի հույների հայրենադարձությունը Հունաստան և Հունաստանի հայերի ներգաղթը խորհրդային Հայաստան: Մեկ ամսվա ընթացքում Սուխումից Հունաստան ներգաղթեց 3007 հույն և հույն թվով հայեր՝ Հունաստանից Հայաստան, թեև այդ ընթացքում Հունաստանում մնում էր դեռևս 55000 հայ:

Գրքի «Ծրկրորդ մասում» հատուկ գլուխ կա (Ե-րդը)՝ «խորհրդային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի ազգությունների նկատմամբ: Տեսություն և իրականություն» խորագրով: Այն իմիջիպիտց վերաբերում էր և երկրի հույն բնակչությանը, որը ձգտում էր ձեռք բերել ընդամենը մշակութային և համայնքային ինքնավարություն: 1930 թ. Չեոնոմորսկի օկրուգում

4 Նրանց զեկույցները հունական կառավարությանը տե՛ս Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին Հանրապետության շրջանում (1918—1920): Քարգմանություն հունարենից Հրալ Բարթիկյանի, Երևան, 1998:

ստեղծվեց «Հունական ույուն» (32 բնակավայրերի 60000 հույն բնակչությամբ) Կրիմսկ կենտրոնով, նրա ստեղծումը ավելի շատ բաղադրական նպատակներ էր հետապնդում: Նշելով իրոք հրդային կառավարության ազդային փորձանշանությունների ձուլումը հետապնդող բաղադրականություններ, գրքում ցույց է տրվում, որ 1937—1938 թթ. փակվում են հունական գրպայինները և հունական թերթերը, Հայրավայրի նեկրոպոլիսից, Ղրիմից և Արխանգելսկից 1937—1939 թթ. բնիացքում հազարավոր հույներ տեղափոխվում են Միչին Ասիա և Սիրիա: 1970 թ. մարդահամարի համաձայն, հունարենը մայրենի լեզու համարեց իՍՄՄ-ի հույների սոսկ 39,3 տոկոսը:

1920-ական թթ. գաղթի ռու հայրենադարձությունները մեծապես նվազեցրին իՍՄՄ-ի հունական բնակչության թվաքանակը: Բայց սարսափելին նրա սոցիալական վիճակի ծայրահեղ վատթարացումն էր: Տեղի ունեցավ րազաբային հույն բնակչության բանակի շեշտակի անկում՝ հօգուտ պուղականի: Վերջինս նաև 1920-ական թթ. 80 տոկոսի, Հետևանքը՝ 1920-ական թթ. սոսական շրջանների հույները զրկվեցին իրենց ավանդական սոցիալական և մտավոր դեկավորությունից: Առաջացած վակուումը շտապեց լրացնել կոմունիստ մտավորականների կիրոսան

Առանձին գլուխ է նվիրված կոլեկտիվացիայի մասնակաշրջանին (1929—1935 թթ.): Կոլեկտիվներին նախորդող կոմունաներ կազմակերպվել էին նաև Սալկայում, հույների շրջանում:

«Երկրորդ մասի» 11-րդ գլուխը վերնագրով ված է՝ «Ողբերգական եռամյան: իՍՄՄ-ի հույների տեղահանություններն ու հալածանքները 1936—1938 թթ.» Գործի գրվեցին հազար ու մի մեղադրանքներ՝ որ իբր հույները կապ ունեն Հունաստանի Մետաքսաի միապետական-Ֆաշիստական վարչակարգի հետ, հակասոցիալիստական, հակասովետական գաղափարներ և պրոպագանդում, Հունաստան արտագաղթի և ցանկություն ունեն և այլն: Ամենից շատ տոժեցին Գոնեցկի հույները: Մեղադրանքներից մեկն էլ այն էր, թե հույները ուզում են Հարավային Ռուսաստանում անկախ հունական հանրապետություն ստեղծել, որի մայրաքաղաքը լինելու էր Մարիուպոլը, որ իբր ժրագիր կար այդ «հանրապետության» մեջ ընդգրկելու նարկոլն ու Կիևը ևս:

1938 թ. փակվեցին հունական դպրոցներ, դրանք կամ վերածվեցին սոսականի, կամ էլ տվյալ խորհրդային հանրապետության ազգության դպրոցի: Արխանգելսկում փակվեց Սուխումի մանկավարժական տեխնիկումը, Սալկայում դե: 1930 թ. բացված մանկավարժական տեխնիկո-

մը, փակվեցին թերթերը, հալածվեց հույն մտավորականությունը: Հունական եկեղեցիները վերածվեցին կոլխոզային պահեստների, հանրակացարանների, գոմերի:

Արխանգելսկում հույների ձերբակալություններ սկսվել էին 1936 թ. դեկտեմբերին՝ նախագահ Նեստոր Լակորայի սպանությունից հետո: Բերիայի օգնական Մամուրովը խոստովանել էր, թե Բերիայի հակադրվելը Լակորային կապված էր և այն բանի հետ, որ վերջինս Արխանգելսկի վարչական կարևոր դիրքերում նշանակում էր հույների և հայերի:

«Երկրորդ մասի» 12-րդ գլուխը վերնագրով ված է՝ «Մի ողբերգությունից մյուսը: Հույների տեղահանությունները 1941—1949 թթ.» Գերմանացիների, Ղրիմի թաթարների և հյուսիսային Կովկասի փոքր ազգությունների այդ տարիներին տեղի ունեցած տեղահանությունները գրթի հեղինակները շանում են բացատրել պատերազմի ժամանակ գերմանացիների հետ նրանց համագործակցելու կամ համագործակցելու ցանկություն ունենալու երկյուղով: Այդ բացատրությունը չի կարելի տարածել հույների վրա (միայն վրաստանից պատերազմին մասնակցեց 13000 հույն, Սալկայի հույները պետությանը նվիրեցին 2 միլիոն ռուբլի), 1944 թ. վրաստանից, Հայաստանից և Ադրբեջանից տեղահանվեց 16375 հույն՝ գլխավորապես Սիրիա և Ղազախստան:

1944 թ. գերմանացիների նահանջից հետո, 11.5—1944 Որոշմամբ սկսվեց թաթարների, թուրքերի և իրանցիների տեղահանությունը Ղրիմից: 22 օր անց թվեցին և Ղրիմի հույները: Հեղինակները հենվում են Կաստա Ֆոտիադիսի «ԻՍՄՄ-ի հույների ցեղասպանությունը ստալինյան ժամանակաշրջանում» հոդվածի վրա, տպված «Հույները նախկին իՍՄՄ-ի կրկրներում (պատմություն, կրթություն)» ժողովածուում, Սալտիկ, 1995, որտեղ բերված է և հարցին վերաբերող 9 կետից և 2 հավելվածից բաղկացած խիստ գաղտնի մի փաստաթուղթ: Մեջբերում ենք Պաշտպանության պետական կոմիտեի Որոշման առաջին երկու կետերը:

Совершенно секретно

ПОСТАНОВЛЕНИЕ
ГОСУДАРСТВЕННОГО КОМИТЕТА
ОБОРОНЫ
№ 5984 сс

от 2 июня 1944 г. Москва, Кремль
Государственный комитет обороны постановляет:

1. Обязать НКВД СССР (тов. Берия) дополнительно к выселению по постанов-

лению ГОКО № 5859 сс от 11. V. 1944 г. крымских татар выселить с территории Крымской АССР 37.000 человек немецких пособников из числа болгар, греков и армян.

Выселение произвести в срок от 1 по 5 июля с. г.

2. Выселяемых из Крыма болгар, греков и армян направить для расселения в сельском хозяйстве, в подсобных хозяйствах и на промышленных предприятиях следующих областей и республик:

- 1 Гурьевской области КССР— 7.000 чел.
- 2 Свердловской области —10.000—»—
- 3 Молотовской области —10.000—»—
- 4 Кемеровской области — 6.000—»—
- 5 Башкирской АССР — 4.000—»—

Председатель Государственного комитета обороны И. Сталин

Послано т. т. Молотову, Берия (НКВД), Маленкову, Минояну, Вознесенскому, Андрееву, Косыгину, Гриценко, Тюляеву (Крым, обком ВКП(б)), Чадаеву—все. Ձեռագրով ավելացված է՝ Шаталину. Наркомам, обкомам, облисполкомам, ЦК и СНК—соответственно.

Որոշման բնագրի առաջին էջի ձախ լուսանցքում գրված է. «Снятие копии и выписки из настоящего постановления категорически воспрещается».

1949 թ. միայն Արխագիայից տեղահանվեց 34000 հույն, այդ թվում՝ 6121 հունահայտուհի. որոնց տներն ու ունեցվածքը մեկ գիշերվա ընթացքում տրվեցին վրացի վերաբնակներին՝ Հույների, հայերի և արխագների տեղահանությունները վրաստանից գրքում համարվում են վրացի ազգայնականների ծրագրի մի մասը՝ օգտագործելով ստեղծված ժողովրդագրական մակրուամբ ալն լրացնել վրացի բնակչությանը՝ արխագական բնակչության նկատմամբ թվալից առավելության հասնելու համար:

1949 թ. ամառվա տեղահանության առնչությամբ արժե ներկայացնել և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի «խիստ գաղտնի» մի այլ Կադրություն, որ բերված է Կոստաս Ֆոտիագիսի բիշ առաջ հիշված հոդվածում:

Совершенно секретно

СОВЕТ МИНИСТРОВ СССР
РАСПОРЯЖЕНИЕ

от 10 августа 1951 г. № 14133
Москва, Кремль

1. Принять предложение МГБ СССР о выселении с территории Грузинской ССР выявленных органами МГБ 69 человек иранцев, греков, турок и дашнаков, которые в момент выселения из Грузии указанных контингентов в соответствии с Постановлениями Совета Министров СССР № 2214—856 от 29 мая 1949 г. и № 727—269 от 21 мая 1950 г. отсутствовали по месту их жительства.

2. Обязать МГБ СССР (г. Игнатьева) произвести в течение августа 1951 г. выселение из Грузинской ССР лиц, указанных в п. 1 настоящего распоряжения, согласовав персональный список выселяемых с Первым секретарем ЦК КП(б) Грузии т. Чарквиани К. И.

Председатель
Совета Министров Союза ССР И. Сталин

Փաստաթղթի ձախ լուսանցքում գրված է. «Снимать копии и делать выписки запрещается»:

Գրքի «Երկրորդ մասի» 13-րդ գլուխը վերաբերում է «ապաստալիսականացման», «խորհրդային մեհալի» ժամանակաշրջանին և ԽՍՀՄ-ի հույներին նշվում է քաղաքային, այդ թվում հույների վերադարձը իրենց օջախները: Արխագիա վերադարձան շուրջ 15000 հույներ: «Ձեռագրի» հաջորդած բրեժնևեյան «լծացման ժամանակաշրջանում» փոքր ազդու թյունների հանդեպ խորականության քաղաքականությունը վերսկսվեց՝ ուսերենի գերակույությանը և ուսացման քաղաքականությանը: Խոսվում է խորհրդային ղեկավարության դադարի որոշումների մասին, որոնք, մինչև «վերականգնում» ժամանակաշրջանը, արգելքներ էին հարուցում կուսակցական, պետական, արհմիութենական և զինվորական բարձր պաշտոններում հույների նշանակմանը: 1965 թ. հետո սկսվեց դալի թվով արտաքսված հույների հայրենադարձությունը Հունաստան: 1965—1985 թթ., այսինքն նախքան ԽՍՀՄ-ից հույների դանդա-

ծային Հայրենադարձությունը, Հունաստան տեղափոխվեցին 30000 հույներ: Սրանց մեծ մասը Հունաստանում 1946—1949 թթ. քաղաքացիական պատերազմից հետո ԽՍՀՄ-ում սպասուսուսած հույներն էին:

Վերջին՝ 14-րդ գլուխը վերնագրված է. «Վերակառուցումից դեպի ԱՊՀ: ԽՍՀՄ-ի հույները 1985—1991 թթ.»։ ԱՊՀ երկրների առաջացման հետ միասին Միջին Ասիայում, Ղրիմում և Անդրկովկասում գլուխ բարձրացրին նախկին խորհրդային «ծայրամասերի» ժողովուրդների ազգային և ազգայնական տրամադրությունները, որոնք հույների վրա բացասաբար անդրադարձան: Գրքում նախ և առաջ նշվում են հայադրբեջանական պատերազմը Լեռնային Ղարաբաղի համար և արխազա-վրացական պատերազմը:

1989 թ. հուլիսին Մոսկվայում գումարվեց խորհրդային հույների հիմնադիր համամիութենական կոնֆերանսը, որտեղ դրսևորվեցին երկու ուղղություններ. դրանցից մեկը սուօչադրվում էր ձգտել Հարավային Ռուսաստանում՝ Կուրանում, «Հունական ինքնավար հանրապետություն» կամ «Ինքնավար շրջանի ստեղծման» «Ռևալյուստական» ուղղությունը հունական խնդրի միակ լուծում էր համարում ԽՍՀՄ-ի հույների զանգվածային ներգաղթը Հունաստան: Հիմնադրվեցին «Խորհրդային հույների համամիութենական ընկերություն», հետագայում Մոսկվայի քաղաքակուտ, ազգութամբ հույն Գավրիլի Պոպովի նախագահությամբ և ամբողջ երկրի տարածքի վրա՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Ղազախստանում՝ Հայաստանում և Ուզբեկստանում՝ շրջանային հազմակերպություններ: 1991 թ. մարտին Գեյնջիկում բացվեց խորհրդային հույների առաջին համամիութենական համագումարը, որին մասնակցեց և Հայաստանի հունական համայնքը: Վերջինիս ներկայացուցիչները անդրադարձան հույն բնակչության համար ևս աղետալի Սպիտակի և Գյումրիի երկրաշարժին: Համագումարում ստեղծվեց «Հույների՝ Պոնտոս համախորհրդային միություն» Գ. Պոպովի գլխավորությամբ: ԽՍՀՄ-ի տարածքը բաժանվեց չորս շրջանի՝ 1) Ղազախստան, Միջին Ասիա: Միերի, 2) Անդրկովկաս, 3) Մոսկվա և ԽՍՀՄ-ի եվրոպական շրջան և 4) Ուկրաինա: ԽՍՀՄ-ում քաղաքական զարգացման հետագա լինթացքը այդ նախաձեռնությունները ի դերն հանեց:

Գրքում որպես «Հավելված» տրված են 36 մանրամասն, արժեքավոր Տախտակներ Ռուսաստանի հույն բնակչության թվաքանակի, գաղթի և հաստատման վայրերի. դրադեղնքի, դպրոց-

ների, եկեղեցիների և այլնի մանրամասն տեղեկանքով՝ սկսած XVI դարից: Կարիք չկա այդ բոլոր Տախտակների վրա առանձին-առանձին կանգ առնել, կնշենք միայն Հայաստանի հույներին վերաբերողները: Այսպես, 8-րդ Տախտակը վերնագրված է՝ «Հույների առաջին վերաբնակեցումները Կովկասում (1829—1830 թթ.)», 9-րդը՝ «Հույների կողմից բնակեցված Սալկայի առաջին գյուղերը»՝ 10-րդը՝ «Հույների և հայերի Սալկայի շրջանում հաստատված վայրերը XIX դարի առաջին կեսին», 11-րդը՝ «Հույների վերաբնակեցումները Կովկասում 1878—1882 թթ.»։ 12-րդը՝ «Պոնտոսից Կովկաս վերաբնակեցված հույների (1878—1882) համեմատական Տախտակ», 13-րդը՝ «Պոնտոսից Կովկաս 1828—1882 թթ. գաղթած հույների ամբողջական թվաքանակը», 17-րդը՝ «Կովկասի փոխարքայության սահմաններում ապրող հույները Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին»: Հստ այս վերջին Տախտակի, Կարսի նահանգում ապրում էր 48994 հույն, ունեին 67 եկեղեցի, 67 քահանա, 78 դպրոց, 123 ուսուցիչ: Երևանի գավառում՝ 2210 հոգի, 3 եկեղեցի, 3 քահանա, 3 դպրոց, 6 ուսուցիչ, Ելիզավետպոլի նահանգում՝ 661 հոգի: 18-րդ Տախտակում հիշվում են բնակավայրերը առանձին-առանձին: Այսպես, Կարսի նահանգում հանվան հիշված են 85 բնակավայրեր: Քիֆլիսի նահանգում են հիշված մի շարք հայկաբեր բնակավայրեր՝ Ախալցխա, Ալավերդի, Կողոս, Բարսակաբը, Յաղդան և այլն: Երևանի գավառում՝ 11 բնակավայր, Ելիզավետպոլի նահանգում՝ 7 բնակավայր:

20-րդ Տախտակը վերնագրված է. «Կարսի նահանգի հունական գյուղերը, որոնք ենթարկվեցին աղետների՝ թուրքերի Անդրկովկաս ձառարած արշավանքի ընթացքում (1914 թ. վերջ—1915 թ. հունվարի սկիզբ)»: Հանվան հիշված է 51 բնակավայր: 22-րդ Տախտակը վերնագրված է՝ «Ռուսական շրջանների հունական բնակչությունը 1919 թ.»։ Հայաստանում հիշվում են Կարս (քաղաք և շրջակայք)՝ 4500 հոգի, Սարիղամիշ (8 գյուղ), Կաղզվան (6 գյուղ), 1450 հոգի, Խորասան (9 գյուղ) 5400 հոգի, Օլթի (7 գյուղ) 2100 հոգի, Գյուլա (13 գյուղ) 6950 հոգի, Արդահան (7 գյուղ) 6000 հոգի, Ալեքսանդրապոլ (քաղաք և շրջակայք) 2100 հոգի, Երևան (քաղաք) 350 հոգի, Սալկա (60 գյուղ) 35000 հոգի, Չեզրե գոտի (6 գյուղ) 7500 հոգի:

30-րդ Տախտակը վերաբերում է 1989 թ. ԽՍՀՄ-ում աեցկացված մարդահամարին, որի նախաձայն Հայկական ԽՍՀ-ում ապրում էր 7400

Հուլյն, Ալավերդու գյուղերում՝ 5000 հողի, մնացածները՝ Երևանում:

Գիրքն ունի անգլերեն (էջ 595—605) և ռուսերեն (էջ 607—619) ամփոփումներ, 6 քարտեզ և 37 լուսանկար, այդ թվում՝ Ախալշենի (Բորչալու) Քրիստոսի Ալլակերպության եկեղեցու, Մալկայի եկեղեցու, Ալավերդու Հուլյն մետաղագործների խմբական լուսանկարները (1890 թ.), Մալկայի մանկավարժական տնի՝ նիկումի 1947—1948 ուստարում ավարտած իուլյն ուսանողների խմբանկարը:

Որքան հնարավոր էր, սահմանափակ այս էջերում ընթերցողներին ներկայացրինք ստվա-

րածավալ այդ աշխատանքը, որ իրականացրել է՝ մի խումբ Հուլյն պատմաբաններ: Գիրքն աչքի է ընկնում հեղինակների և խմբագրի հետազոտվող նյութի խոր իմացությամբ, աղբյուրների և գրականության քաջատեղյակությամբ և դրանց նկատմամբ թննադատական մոտեցմամբ: Աշխատությունը անտարակույս կարող է օրինակ ծառայել հետազոտության առարկա աշխարհագրական տարածաշրջանի ազգային այլ փոքրամասնությունների պատմությունն ուսումնասիրելու համար:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ՀՐԱԶ ԲԱՐՔԻԿՅԱՆ